

ՏԻՐ ԵՒ ՏՆՈՒԷՆ  
Ե. ԲՈՐՈՍՅԱՆ

Եամակ կամ որ եւ է  
գրութիւն պէտք է ուղղել առ  
Տեղախնայ ԱՐՇԱԼՈՅՍ րազմի  
ԳԱՀԻԷ (Եգիպտոս)

E. TOROSSIAN  
Dirigeur du journal arménien  
ARCHALOUICE  
LE CAIRE (EGYPTE)

# ԱՐՇԱԼՈՅՍ

## Լ Ր Ա Գ Ի Ր

### ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԵԱԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԿԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ	
Տարեկան ողջ դահիւն .	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԴ	
Տարեկան ծրակի	20
Վեցամսեայ »	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՆՆԻԿ  
Եւ թղթատարի ծախքը  
հոգաւորութեան վրայ է :

Խմբագրութեան ուղղուած  
գրութիւնի եւ չ'են տրուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ  
Կանխիկ վճարելի են

#### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԳ

ԱՐՏՈՅԱԿՐԱՆԻ Պատ. քաժա-  
նորդներէն ջերմասկէս կը խնդրուի որ քա-  
րեհաճիւն նախորդ տարիէն մնացեալ պար-  
տագ կցեղով դրկել նաեւ իրեց ԵՐԿՐՈՐԴ  
Տարեչրջանի քաժանորդագիրը, եւ հարկ  
չը թողոյ ճասնատող դիմումներու, որոնք  
նոր դժուարութիւն մը պիտի ըլլան ԱՐՇԱ-  
ԼՈՅՍԻ արդէն քաղաքացայ Տեղախնայութեան :

#### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՅԽԱՐԷՆ

Եթէ իմաստուններու և իմաստակներու,  
կարողներու և անճարակներու թղթակցու-  
թիւնները փոխանակ բարեփոխելու յոռե-  
փոխող ինքնակոչ կամ ոչ խմբագրապետ-  
ներու երբեմն ճանճարացողի և ստէպ ծի-  
ծաղեցողի միջնորդութեն դուրս ելլելով,  
աչքերնիս աշխարհիս ջրմ կողմը յաճենք,  
մեծ զարմացումով պիտի հաստատենք որ  
Շոթ-Օր յի հմտակցի խմբագրապետը իրա-  
ւունք ունէր սնանկութիւն մը տեսնելու ա-  
մենուրեք: Միայն թէ այն սնանկութիւնը որ  
մեր աչքին կը պարզուի, քննչրկային կամ  
բան մ'ըսած ըլլալու համար թեթեամբու-  
րէն երեւակայութեան սնանկութիւն մը չէ:  
Մենք պիտի գտնենք վայրագ, ճիւղալիս,  
ժանտատեմիլ, շոչափելի սնանկութիւն մը  
սնանկութիւն արդարութեան:

Թերեւս պիտի առարկուի որ իմ այս  
յայտադրութիւնս նոր գիւտ մ'ըրած ըլ-  
լալու փառքն ու պատիւը չպիտի տայ ին-  
ժի, թէ յորմէ հետէ երկու մարդ գտնուած  
է երկրիս վրայ անիրաւութիւնն ալ անոնց  
մէջ սպրդած է: Այո՛, ճիշդ է որ անարդա-  
րութիւնը, հարստահարութիւնը, բռնապե-  
տութիւնը և ասոնց ընձիւղները այնքան հին  
են, որքան է աշխարհ: Բայց պարագայ  
մը կայ, զոր անտես ընելու չէ:

Երբ ի հնումն երկրագունտիս մէկ մա-  
սին վրայ անմեղներ կը խոչտանգուէին,  
ուրիշ կողմ հանդարտ կը ձգուէին: Երբ  
նոյն իսկ քանի մը բռնապետներ միանալով  
կը յարձակէին անզորի մը վրայ, սա թե  
և թիկունք կրնար գտնել գոնէ ուրիշ զօժ  
քաւորի մը կողմէն: Արդարութիւնը իր գո-  
յութիւնը կ'ապացուցանէր որեւէ կերպով մը:

Բայց այսօր ամեն ինչ փոխուած է.  
տկարին զօրավիշ, բռնաբարեալին պաշտ-  
պան փնտռել անօգուտ է. ինքնամեղու-

թիւնը ամեն ինչ տապալեց. տրտունջները  
անլսելի եղան. արդարութեան անունը մի-  
այն մնաց: Եւ կարելի է ըսել որ Հայկական  
կոտորածը եղաւ իրաց այս վիճակը աւաճին  
հոչակող: Այն թուականէն սկսեալ զէպքերը  
իրարու յաջորդեցին անընդմիջաբար: Թուր-  
քո-Հելլենական պատերազմը, մինչևստիոյ  
առանձնաշնորհումի բարձուժը, Անկլո-Պօե-  
րական ապստամբիչ և հրահանգիչ պատերազ-  
մը, զոր աւելի ճիշդ կ'ըլլայ յորջորջել Պօե-  
րական դիւցազնեղութիւն. շոչափելի փաս-  
տեր են արդարութեան սնանկութեան:  
Յրեւակայն ինքզինը չկրնար ինձ հակասել.  
Դա ճիւղաւորապէս երախտագիտական  
սրբաբ մ'էր զոր նիքալա Բ. Չարր Ռան-  
տոյց Յունաստանի Երկրիս իշխանին, և ո-  
րուն մուրհակը դրուած էր ճարտարական  
հողին վրայ:

Երբ Հայ երիտասարդներուն անհաւա-  
որ զինուց շառաչուէր երկրորդ կը դըրգէր,  
երբ Հայ տիկնանց և կնճանաց բռնաբա-  
րումէն բնութիւնը կը սոսկար, երբ Հայ  
մանկուտոյն աղիողորմ ճիւղն ու գոյր մինչև  
երկինք կը հասնէին, քրիստոնէութեան  
ինքնաշարժը պաշտպանները ինչոքեքերու,  
դիւրայ բաժակներու մէջ կը խեղդէին զի-  
րենք խլացնող խղճի ձայնը: Ամբողջ քրիս-  
տոնեայ Եւրոպա, որ դարեր առաջ անհա-  
մար զօրքեր կը թափէր տիրանալու հա-  
մար Պաղեստինու մի քանի քարերուն — ո-  
րոնք ուր որ ալ ըլլան չեն կրնար իրենց  
սրբութիւնը կորսնցնել՝ եթէ իրօք սուրբ  
են — այս անգամ ունենալով նաև երի-  
տասարդ Ամբրիկան իրեն հետ, մատն ան-  
գամ չվերցուց ըսելու համար դահճին.  
(Ա՛լ կը բաւէ . . . .)

Թուրքո-Հելլենական պատերազմը, որ  
կերպով մը խաւարի կռիւն էր ընդդէմ  
լուտայ, ո՛չ միայն անտարբեր ձգեց այդ  
միւսնոյն տէրութիւնները, այլ նաև անոնց-  
մէ մին բաց է ի բաց համակիր գտնուեցաւ  
խաւարին . . . .

Հզօր կայսրութիւն մը՝ Ռուսիա՝ որ գեո-  
երեսուն տարի առաջ քրիստոնէից ազատու-  
թեան առաջնակարգ շահատակ կը կանդ-  
նէր, երբեք մինչևստիոյ ձեռքէն կը կորզէր  
այդ երբեմն շուքտական նահանգին առանձ-  
նաշնորհումները, և այսօր Հայերը կը կո-  
ղնպտէ իրենց դպրոցներէն, կրթական ըն-  
կերութիւններէն, առանց մեղադրանքի ձայն  
մը լսելու միւս կառավարութիւններէն. . . .

Ինքզինքը քրիստոնէութեան տկարը  
ազատութեան մոլեգին սիրահար, բռնա-  
ւորներու ուրերիմ թշնամի, գերեալներու

գորովագութ բարեկամ, Էլն., Էլն. յոր-  
ջորջող Մեծն Բրիտանիա, տէր երկրիս ա-  
հեղադոյն կայսրութեան, այսօր անմուտչորս  
ամսէ ի վեր կը ճգնի զգեղմնել, արմա-  
տախել, բնալին ընել խաչնարածներու  
ցեղ մը, որ կը պաշտէ միւսնոյն Աստուածը,  
որ ունի միւսնոյն հովիւը, միւսնոյն դաւա-  
նանքը, եկեղեցին . . . . Եւ այս անշուր-  
ոճիրը կը գործուի տիրանալու համար ոսկ-  
ւոյ հանքերու . . . . Եւ տէրութիւնները,  
թերեւ Պօէրները նախապէս քաջալերելէն  
և պատերազմի դրդելէն ետքը, այսօր ձե-  
ռնապահ կը մնան . . . . Ահա՛ արդարու-  
թիւն . . . .

Նոյն իսկ Չինական հարցը՝ յանուն ար-  
դարութեան անարդարանալի միջադէպ մ'է  
քաղաքական աշխարհին մէջ:

Առ այժմ մէկ կողմ թողունք այն  
կասկածը, որ՝ ըստ եւրոպական մամուլի՝ կը  
ծանրանայ այս կամ այն տէրութեան վրայ  
իրբ ծրագրող և պատրաստող այդ գէպքը,  
և բանք թէ սա պարզապէս հակաքրիս-  
տոնեայ կամ հակամարդկային վայրագ ցոյց  
մ'է վայրենի ազգի մը կողմէն, զոր պէտք  
է պատժել և որուն պէտք է հասկցնել  
թէ իր անձնուէր կատարութիւնը միշտ պի-  
տի փչուուի քաղաքակիրթ աշխարհի պաղա-  
րիւն թիւղանթներու և սուրիններու առջև:  
Բայց ինքնապաշտպանութեան այս վիճելի  
կամ ոչ իրաւունքը՝ ինչպէս հայտնեցնելու է  
Գերմանական կայսրութեան այն հրամանին  
հետ, որ Գերմանիոյ իւրաքանչիւր զինուորին  
վրայ պարտ կը գնէ շարգել, սպաննել,  
միշտ շարգել, միշտ սպաննել և երբէք չլսը-  
նայել ո՛չ այր և ո՛չ կին, ո՛չ ծեր և ո՛չ մա-  
նուկ: Եւ երբ իր հլու զինուորներէն մին  
թերեւ ի բնէ խաղաղասէր՝ շարգելէ, ըս-  
պաննելէ յոգնած, սիրտը աղեկս ուր եղած,  
իր ներքին տպաւորութիւնները կը յայտնէ  
միամտօրէն իր ծնողաց, դարձեալ նոյն  
կայսրութիւնն է որ կուզէ զայն պատժել  
իրբ դասալիք, և այս յանուն արդարու-  
թեան . . . .

Գերմանիոյ երկաթեայ նախարարապե-  
տը Պիլզարը՝ Իւհյանի մ'արիւնը շատ կը  
գտնէր ամբողջ Հայաստանի համար. բնա-  
կան է որ անոր կառավարութիւնը 400 մի-  
լիոն չինացուց արիւնը անբաւական դատէ  
փոխաբերելու համար իր գեասպանին արիւնը:

Եւ ահա այս ինքնահաճ և բարոյապէս  
սնանկացած կառավարութեանց կը դիմէ  
Պօէրներուն նահապետ Գրիկէր ի ինչիր  
արդարութեան: Ո՛վ բազդի հեգնութիւն:

Երբունի նախագահը պիտի ծափա-  
հարուի ժողովրդէն, որ յաղթական կամար-

ներ պիտի սփռէ անոր ճամբուն վրայ: Բայց երբ պալատներ մտնէ՝ վեհապետներուն քով արդարութիւն փնտռելու համար, պէտք է որ նախապէս համոզուի թէ ուրիշ բան չպիտի գտնէ, բայց միայն յարգալի համակրութիւն: Քաղաքական աշխարհը՝ արդարութեան սնանկացած ըլլալը կը գուժէ:

Հարաւ-Ափրիկեան փոքրիկ հանրապետութեան նախագահին Եւրոպական այս պատուար առիթ մը կը հայթայթէ մեզի ուսումնասիրելու այլևայլ ազգերու ոչ-պաշտօնական, բոլորովին անկեղծ և բոլորովին բնածին նկարագիրը: Այն ընդունելութիւնները, զոր ծերունի Քրիստիան պիտի գտնէ Եւրոպական պանազան ժողովուրդներու քով, մեզ ապահովապէս պիտի պատկերացնեն այն ժողովուրդներուն հոգեկան վիճակը, անոնց բարոյապէս զարգացումին աստիճանը: Բարոյական զարգացումն է որ մեզ գիտակ կ'ընէ մեր իրաւունքներուն: Բայց կասկածելի է որ Պօէններու նահապետին պատուար պաշտօնական արդիւնք մը միայն արտադրէ: Եթէ Մեծն Բրիտանիա շարունակէ իր այժմեայ ուղղութիւնը Հարաւ-Ափրիկէի մէջ, եթէ տէրութիւնները շարունակեն իրենց անտարբերութիւնը հանդէպ այս եղելութեանց, թերեւս այն ատեն հակահարածի մը պիտի ենթարկուի ժողովուրդներուն խանդավառութիւնը, և պիտի փոխուի ամեն ինչ կիզիչ, լափիչ հարբուրդի տես հրաբուխներուն:

Այս, այսօր ժողովուրդները կը ծափահարեն ծերունի մը, իրենց աննկարագրելի համակրանաց ցոյցերով կ'ողողեն դիւցազուններու սպիտակահեր պետ մը: Բայց այդ ծափահարութեանց, այդ համակրանաց տակէն խուլ բողբ մը կը լրսուի ուշադիր մտիկ ընողներուն: միջինաւոր հոգիներէ պլացած բողբ մը ընդդէմ ինքնամոռնութեան:

Թրանսվալի նահապետը՝ թերեւս անգիտակցաբար՝ ահարկու յեղափոխութիւններու, արիւնալի քաղաքական պատերազմներու որովոր սփռելով կը պարտի Եւրոպայի մէջ:

Աներկբայելի է որ՝ արդարութիւնը սրանակացած է... կառավարական շրջաններուն մէջ, բայց ժողովուրդին արդարութիւնը կայ և կը մնայ անխախտ:

Փրանսական կառավարութիւնը, որ քահնիցս ճաշակած է ժողովուրդային բարեկութեան դառնաթոյն պտուղը, և որ համեմատաբար՝ միշտ աւելի վեհանձն, աւելի ազատուի, աւելի սրբարարաբար գտնուած է քան միւս տէրութիւնները, Անկլո-Փրանսական վաղկան խնդրոյն մէջ իրաւարար միջնորդներուն նախակարգապետ ըլլալու միտում մը կը ցուցնէ, ըստ Բարիկէն քաջուած 1 Գեկտեմբեր հեռագրի իմաստին: Հանրապետական կառավարութեան այս ձեռնարկը ո՞ր ատիճան յաջողութիւն պիտի գտնէ գիւտնազիտական դահլիճներուն մէջ, զայդ նախատեսել անհնար է՝ պէթ առ այժմ, մանաւանդ եթէ ի նկատի առնուի որ Գերմանիոյ կայսրը բոլորովին հակառակ տրամադրութիւն մ'ունի, զոր բաւական բացարձակ մերժելով ընդունել Պ. Քրիստիանը: Արդ, այդ մերժումը, որ անսրակելի կերպով կը հակասէ հինգ տարի առաջ կայսեր

կողմէն ծերունի նախագահին քաջուած հեռագրի ոգւոյն, ուրիշ բան չկրնար նշանակել բայց միայն գաղտնի համաձայնութիւն մը Վիգթորիա թագուհւոյն կառավարութեան հետ:

Հիմայ պէտք է ակնկառոյց դիտել տրամադրութիւնը Չարին, որուն քով պիտի երթայ անշուշտ Պ. Քրիստիանը, նախապէս տեսնելէն ետքը իր բնական պաշտպանուհին, Հոլանտայի թագուհին:

Ինչ որ ալ ըլլայ, Փրանսայի Արտաքին գործոց նախարարը, իր վերսյուշեալ ընթացքով բաւական դոճացում տուաւ իր հայրենակիցներու խանդավառութեան, միեւնոյն ժամանակ տկարացնելով ի նպաստ իր հայրենեաց՝ աղբեցութիւնը այն հակահարուածին որուն վրայ խօսեցանք:

Կը մնան միւս երկիրները, միւս ժողովուրդները... հայերը: 6 Գեկտ. 1900 Պ.

ԱՄՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՁԱՊԱՀԱԿԱՆ ԱՒԱԶԱՒՏ-ՀԱՍԱԹ (Կրակի)

ՆԵՐԱՏՈՒԹԻՒՆ

Շարունակորիւն նախորդ թիւին

Մարդիկ սովորելու եւ սովորեցնելու համար ստեղծուած են: Բնութեան կազմակերպուած հանգամանքը, զարբերու անփոփոխ ցոլացումները, սերունդներու յաջորդական դրութեան եւ մարդուն բարեքրթման եւ զարգացման հակամէտ ձգտումները մեր այս խորհրդածութեան ու համոզման հաստատա պարտոյցներն են: Գիտութիւնը իւրացնելու եւ շահագործելու բուն նպատակն անգուցալ փափաքով մը սնանիլ կը նշանակէ: Գիտում թէ այս աւերիչ կոյտակին չքացման ի նպաստ մաքառելու յօտար ու անվերս արտանայն կը պահանջէ: Բայց եւ այնպէս, մերթ գտնածներու բարենպաստ ուստաստումներն ալ կրնան ունենալ իրենց օգտակար ու շինիչ ազդեցութիւնները՝ որոյ ուրախաբեր իրականացումը միշտ ապագան պատկած է, անցեալին վրայ թուր ու մուր կարգալով: Այս անգամ աւս յոռաջարանը բաւ համարելով՝ անցնինք բուն մեր ընտրած նիւթին, վստահ ըլլալով թէ քանի մը գնահատող անկեղծ հոգիներ կը զբաւնուին գէթ այս աշխարհավերջիկ Արշակաւանին մէջ:

Այս բացարձակ իրողութիւն մ'է թէ՛ հիւանդութիւնները բնական օրինաց զանցաւման արդասիք են:

Նիւթական կամ գործարանային պաշտօնավարութեան մը պտտահական զրկանքը՝ սեղանական կամ ընդհանուր խառնակութիւն մը յառաջ կը բերէ կազմութեան մէջ: Բնական սննդը օրինաց բունարարումն է այս՝ զոր յաճախ գիտութեամբ եւ գուն ուրեք անգիտութեամբ կը գործադրուին, եւ բնութեան կենդանաբար ծոցին մէջ միայն ապրելու սահմանուող մեր ընդարձայ մարմիններուն արտացման ուղղակի պատճառ կ'ըլլան: Ուրիշն, մեր այս ներկայացուցած ճշմարտութիւններէն կը հետեւի թէ՛ աւազախտի ծագումը պարզտելու համար, զանց եղած կամ խաթարուած բնական օրէնքները նըկատողութեան առնելու ենք:

Իպոկրատի օրերէն ի վեր ծանօթ է ուսուցախար, որոյ վրայ նոյն ինքն իպոկրատ, Գաղիանոս եւ Արեւիկ յստակ տեղեկութիւններ տըւած են: Թէեւ այս արտք սերտ խնամութիւն ունի երկիւմանց խիթ (ֆոլիֆ նեֆոէրիֆ) ինչեւ ստիպոյն, առ այժմ, Արշալոյսի անձուկ էջերը չ'նեղելու համար՝ միայն բուն աւազախտին վրայ տեղեկագրելով պիտի բաւականանանք:

Հօֆման, Սիտէնհամ եւ վան Սուլիթին գործնականապէս, հիւանդներուն անկողիններուն մօտիկը ուսումնասիրեցին այս հիւանդութիւնը, եւ պատճառները հրապարակեցին պար-

բերաբար, յօգուտ հանրութեան: 1776 ին Շուէտացի տարբապէտ Շիլի միջոցաւ մէզին մէջ միզական թթուին գտնուելը խնդրոյն մութ մընացած մասը լուսարանեց, եւ յորմէ յետոյ, 18րդ. դարուն, Սիվիլալի եւ Ռուայէրի վերաբուժական փորձերն ու աշխատութիւնները հաստատեցին նախորդներուն տեղեկագրերը, եւ անմոռանալի յիշատակ մը թողուցին բժշկական պատմութեան մէջ:

Աւազախտ կամ երկկամային քարահար կը կոչուին միզային փոքրիկ, հատածեւ մածուածները՝ որք գործարանաւոր կամ հանքային մարմիններ են, եւ երկկամայիններուն ու միզանցքներուն արտադրող կամ հիւթանջատ մասին մէջ շրջափոխութեամբ կը կազմուին ու կ'աճին, եւ զորս միզուկէն դուրս կ'արձակէ պարբերաբար հիւանդը: Երբեմն կը գնդաւոր զլիսու մեծութեամբ կամ փոքր ու փոփոխ թիւանքութեամբ աւազները աւելի մեծութիւն կ'ունենան, առանց սակայն արտադրող վստաին արամագիծն ու ծաւալականութեան շրջապատն անցնելու, այլ այդ անցքէն դուրս կարենալ ելնելու համար:

Յայնժամ այդ մարմինները խճիկ անունը կ'ստանան՝ զոր գիտականապէս չիթիելու չ'է աւազին հետ, որպէս կ'ընեն շատ անգամ գործնականին մէջ, թերուս բժիշկները: Բայց, երբ արտադրող գեղձին խողովակէն չ'կարենալ անցնելու աստիճան կը խոչորնան այս միզական գոյացութիւնները, միզամուրք կամ ասիկօրէն քար սնունը կ'առնեն, եւ առանձին կրնան ընդարձակ նիւթ մատակարարել, երբ իրենց մով զբաղիլ հարկ ըլլայ օր մը:

Ընդհանրապէս աւազախտի երեք զանազանութիւններ ընդունուած է. 1. միզական աւազախտ, 2. լուսածնասակալ աւազախտ, 3. քրոթն ջիւակալ աւազախտ:

Ա. ՄԻԶԱԿԱՆ ԱՒԱԶԱԽՏ. — Միզական կամ կարմիր աւազախտ միզային արտակրութեան մը արգասիք է, այսինքն սննդաւորութեան ընդհանուր անկարգութեան մը՝ որոյ հետեւանօք մեր յօրինուածին մէջ հիւրընկալուող բորակածնաւոր նիւթերը միզիւ (լուրե) կազմելու աստիճան այրելու տեղ՝ անկատար մնացած՝ եւ միզական թթու (ապիտ իւրիֆ) ձեւացուցած են, որ միզիւտէն սակաւակէզ սպիտակեղպ (ալպիւսին) մարմիններու թթուութեամբ (օֆիսսալիս) կը կազմուի:

Միզական թթուէն ու միզատներ (լուրեք) էն ձեւացած աւազն ու մածուածները թխակարմիր կամ դեղնորակ են: Ասոնք գրեթէ զուտ միզական թթուէ, կամ ուշակի, նատրոնի, կիրի եւ մագնէսեաի միզատներէ գոյացած են:

Միզական թթուէ կամ նատրոնի միզատէ կազմուած աւազը՝ մանրացուցին ներքեւ փոքրիկ, անձեւ հատիկներու երեւուելով կը ներկայանայ՝ որք ետացած ջուրի մէջ կը լուծուին, ինչ որ զանոնք կը բնորոշէ հողային լուսածընատներէն (ֆօսֆատս քիւրոս) . մերթ տարանկիւնանստածեւ թանթելը կը յօրինեն (միզական թթու). երբեմն ալ անկերպարան հատաւորումներէ կամ մանր վարդազոյն ստողիկներէ ձեւացած կարմրադիւսազոյն մըրը մը կը նատի կարուրային տակ, եւ որ՝ աւազին նատրոնի միզատէ գոյացած ըլլալը կ'ապացուցանէ:

Միզական թթուէն ու նատրոնի միզատը (լուրեք սր սուս) միայն թթու մէզին մէջ կը գտնուին: Աւազիկ միզատը (լուրեք ս'ալմօնիաֆ) կալաբարային մէզերու մէջ տեսնուած է, որոյ բիւրեղները երկար ու սրածայր սակներով ցցուած գնդակներու երեւոյթն ունին:

(Շարունակորիւն) 4. Գ. ՈՒԶՈՒՆԱՆ

ՎՐԻՊԱԿ

«Արշալոյս» ի թիւ 130 «Պարտականութիւններ» յօդուածին Գ. սինակին 47-տողին «բնականաբար» բառէն ետքը «Շոր-Օր» ը պէտք է կարդալ «Նոր-Օր»:

Գարձեալ նոյն թուոյն «Նամակ կրեւտէն» գրութեան «Արարկիբցի Գահիրէ-բնակ Տէր և Տիկին Առաքել Մ. Պէրպէր-

հան, որ եկեղեցի գալով՝ երբ տեսաւ թէ դռուն առանց վանդակապատի էր և լին . » պէտք է կարգաւ « երբ տեսաւ թէ դռան առանց վանդակապատի էր » :

ԲԱՅ ՆԱՄԱԿ

Առ Պրն. Գ. Ն. — Գահիրէ

—X—

Սիրելի բարեկամ,

«Երբ ակումբի մը եւ կամ ժողովոյ մը մէջ գտնուեալ նախ քանի եւ հասկցիր թէ որոնց եւ ինչ տեսակ մարդոց ընկերութիւնը կը վայելես, ու յետոյ որոշէ, պէ՛տք է մնալ հոն թէ մեկնիր . »

Ահա սիրելիս իմաստունին այս խրատը մտիկ ըրած չըլլալու համար էր որ տուեցիք :

Չի կարծես թէ քու միշտ լսած եւ կամ մինչեւ հիմայ տեսած եղբայրութիւններէն մէկը ըլլայ պատմելիքս, ո՛չ . բոլորովին տարբեր եւ տարօրինակ բան մ'է . այն աստիճան տարօրինակ որ քանի միտքս բերեմ անկարելի կ'ըլլայ ինձ խնդար բռնել . սարօրինակ, այո՛, որ իւր ձեւին մէջ կրնայ նույնօրէ մը համարուիլ, եւ շիտակը նորասէրները եթէ տարիներով աշխատէին ասանկ եղական գիւտ մը ընկելու, վստահ եղիր թէ ապարդիւն պիտի մնար իրենց ջանքը :

Կարծես թէ ջիղերուս դպած ըլլայ, ցորեկը կը խնդամ, գիշերը կը խնդամ, քալած ատեն կը խնդամ, խնդումի գետ մը կը բղխի ներսէս, եւ կ'արժէ որ քեզ ալ գոնէ քիչ մը մասնակից ընեմ այս խնդուքներուս :

Պատմեմ եղբայրներ, քայց լաւ մտիկ ըրէ ու հասկցիր թէ ինչպէս կը վարձատրուի եղբր քաղաքավարութիւնը ու դադրէ այլեւս քաղաքավար ըլլալէ, եթէ չես ուզեր որ ինձ պատահածին նման փորձանք մը օր մըն ալ քեզի պատահի, շնորհիւ անհամբեր Ատենապետներու . . . :

Շարաթ օրուան «Նոր-Օր»ին մէջ տեղեկացայ թէ հետեւեալ օր Ապտինի Լսարան-Ընթերցատուն ընկերութեան ընդհանուր ժողովը պիտի գումարուի, փափաքեցայ ներկայ գտնուիլ սոյն նստին, ուստի հետեւեալ օր որոշեալ ժամուն գացի ու անպատեհութեանց տեղի չտալու համար յիշեալ ընկերութեան յարգելի անդամակիցներէն մէկուն հետ լուր դրկեցի թէ արդեօք կարելի՞ էր իբր ունկնդիր ներկայ գտնուիլ իրենց ժողովոյն, կ'երեւի թէ ժողովը մերժած չէր իմ այս փափաքս, որովհետեւ քիչ յետոյ յիշեալ պարոնը սանդուխներուն վրայ երեւնալով վեր հրաւիրեց զիս, ժամէ մ'աւելի նստեցայ հոն, մեկնած պահուս, քաղաքավարական պարտականութիւն մը կատարած ըլլալու ջերմ փափաքով ոտքի ելայ շնորհակալութիւնս յայտնելու պատուաբան անդամոց որոնք պատիւ ըրած էին զիս ընդունելու :

Իերանս նոր բացած էի դեռ, քայց ո՛վ յուսախարութիւն, ո՛վ պատրանք, շրթունքներս կարկամեալ մնացին բերնիս երկու եզերքները, չորս կողմս կը գիտէի ապուշ կըթած եւ չէի հասկնար թէ ինչ կ'ըլլար . ժողովոյն ատենապետը զանգակը կոտրելու աստիճան կը հնչեցնէր . կը պտար . չէ՛, չէ՛, չէ՛ մ'իող տար, կ'արգիլեմ, իրաւունք չունիք, չպիտի ըլլայ, ոչ, լուռութիւն, չպիտի խօսիք, միեւնոյն ժամանակ զանգակն ալ կը ձայնակցէր իւր խաղցուցիչ ելեւէջներով գովելի ատենապետին . եւ պահ մը կարծեցի թէ վայրկեանական ջղային տաղանայի մը ենթակայ եղած ըլլայ իրենց անհամբեր ատենապետը . զողջալով ըսի թէ «Իւր իրաւունք չունիք արգիլելու զիս շնորհակալութիւնս յայտնելէ» ու մեկնեցայ պաղ բաղնիքէ մը դուրս ելողով պէս :

Հիմա, սիրելի բարեկամս, հասկցա՛ր թէ ինչպէս կը վարձատրուի քաղաքավարութիւնը ու սորովեցար թէ սեւէ մէկու մը կողմէ ժողովի մը ուղղուած շնորհակալութիւնը՝ ժողովոյն ատենապետը կարող է մերժել, է՛հ, համակերպելու է, աս ալ նորութիւն մ'է, չէ՛ մի որ նորութիւններու աշխարհին մէջ կ'ապրինք կոր : Այս ինձ պատահածը լաւ միտքդ պահէ եւ ուրիշ առթիւ ատենապետ գտնուած տեղ մը չը-

նորհակալութիւն մի՛ յայտնէր, եթէ չես ուզեր ձմեռ ժամանակ պաղ տալ ինչու հարկին ներքեւ գտնուիլ, որովհետեւ այդ տեսակ ձեւակերպութիւնները նորընտիր ատենապետներուն ջիղերուն կը դպչի կոր եղեր . . . :

Ուրիշ առթիւ դարձեալ կը գրեմ :  
Ստեփան  
Քոյգ  
Ա. ՄՍՐԼԵԱՆ

ՄԱՆԿԱԲԱՐՁ  
ՏԻՎԻՆ ՍՈՍԻՅ ԱԶԳԱՊԵՏԵԱՆ  
Շարա-Ապտիւր-Ազիզ

Վերջերս իւր բնակութիւնը Խուրուսֆիշէն փոխադրած է Շարա Ապտիւր Ազիզ, Ալի փաշա Շէրֆի պարտիզին դիմաց, Ահմէտ պէյ Ապտիւր Բազդիի 20 թիւ սեփականութեան մէջ :

Տիկին Սօֆիկ Ազգապետեան իւր փորձառութեամբ եւ յաջողակութեամբ արդէն ծանօթ ըլլալով գահիւրէնակ ազգայնոց եւ նոյն իսկ օտարաց, աւելորդ կը համարուի զայն յանձնարարել իւր խնամոցը պէտք ունեցողներուն :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լահէյ 6 դեկտ . — Պ. Գրիկէր հոս հասաւ . խանդավառութեամբ ընդունուեցաւ : Ընդունեց բոլոր նախարարները ի բաց առեալ նախարարապետը որ խիստ զբաղեալ էր :

Լոնտոն 6 դեկտ . — Հետեւակ զօրք չը պիտի խրկուի այլ ևս Հարա-Ափրիկէ, քայց միայն հեծելազօր :

Լոնտոն 9 դեկտ . — Թագուհւոյն գահաճառը կը բաւականանայ Թրանսլալի համար եղած ծախքերու վաւերացումը խնդրելու : Լորտ Սօլզբերի կը յայտարարէ որ Հարա-Ափրիկեան Հանրապետութեանց այն ատեն միայն գաղթականութեան դիրք պիտի տրուի, երբ կատարելագոյնս խաղաղին :

Խ Ա Ռ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

ԱնիՇխԱնԱնՆերՈՒ ՉԵՐԲԱԿԱԼՈՒՄ . — Կառավարութիւնը լսելով որ Բօր-Սայիտէն երեք անիշխանականներ Գահիրէ եկած են, դադարի ոստիկանութեան միջոցաւ հրակողութեան տակ դրած էր զանոնք : Այս առտու անիշխանականները դիմեցին դէպ' Ապտինի հրապարակը և իրարմէ զատուեցան : Երկուքը չորս կողմը և անցող դարձողները կը զննէին, մինչդեռ երրորդը դէպ' ի պալատ կը յառաջանար անտարբեր դէմքով մը : Գաղտնի ոստիկանները աչքէ չհեռացուցին զանոնք, և երբ նորին Բարձրութեան կառքը հասաւ Ապտինի փողոցը իսկոյն ձերբակալեցին անիշխանականներուն երկուքը, որոնք կասկածառիթ նշաններ կ'ընէին : Երրորդը փախաւ, քայց իր հետքը գտնուեցաւ և շատ չանցած օձիքը ձեռք տուաւ :

Հեղինակ Ան կառավարութիւնը 24 ժամու իջնուց եզրպտոսէն գացողներուն դէմ դրած քարանձիմայի միջոցը :

ՏԱՄԻԷԹԻ շրջակայները բամպակի հունձքը 50-75 Օ/Օ նուազ է անցած տարւոյ հունձքէն : Բրինձի հունձքն ալ սակաւաբանակ է :

ՄԱՆՍՈՒՐԱՅԷՆ կը հաղորդուի որ Սալամուն էլ Գօմալի Իրպտիններու եկեղեցին թալլուած է անցեալ ամսոյ 22 ի գիշերը :

Չարագործները եկեղեցւոյն դուռներն ու պատուհանները կոտրած են ներս մտնելու համար :

ՇԱՐԺՈՒՄ կը գրէ իր 268 թուով «Նըկատելով որ բազմաթիւ ազգայիններ կարելութիւն չ'ունին բոլոր հայ հրատարակութեանց միանգամայն բաժանորդագրուիլ . . . . Շարժում որոշած է ասկէ ետքը Պարբերական մամուլը վերնագրին տակ մերթ ընդ մերթ ամփոփել բոլոր այն շահեկան գրութիւնները որոնք արտասահմանի հայ լրագրութեանց մէջ կ'երևան » : Արշայրջս այս գրութիւնը սկսած է արդէն քանի մը շաբաթէ ի վեր, ինչպէս անշուշտ գիտեն ընթերցողք, որոնք ի հարկէ դժգոհ չ'պիտի մնան այս օրինակ նորութենէ մը :

Շարժում մասնաւոր յայտարարութեամբ մը կը ծանուցանէ թէ՛ առաջիկայ Յունկարէն սկսեալ Վիէնայի մէջ պիտի հրատարակուի և այս տեղափոխութեան ու տպարանական գործերու կարգադրութեան համար մէկ ամսոյ չափ պիտի ընդհատուի հրատարակութիւնը : Գ'նայ անօրինութիւն Շարժումի հասցէն նոյնը պիտի մնայ :

ԱՄԵՐԻԿԱՅԻ «Հայրենիք» թերթէն կը քաղենք հետեւեալը . —

Բարիկէն կը գրեն մեզի թէ նոյ . 10 ին հոն պիտի սկսուի հրատարակուիլ կիսամետայ ֆրանսերէն թերթ մը, փ'Օ ԱՐՄԷՆԻԱ (Հայաստանի համար) լատիներէն խորագրին տակ :

Թերթին պիտի աշխատակցին Յրանսայի ամենէն նշանաւոր հրատարակագիրներն ու մատենագիրները — Քլէմանս, ժօնէս, Անատոլ Յրանս, Փրէսանտէ, Քիյաու, Կօհիէ, Ժաքլար, Տրնի Բօշէն և ուրիշներ : Անգլիայէն՝ քաղ ծանօթ հայասէր ձէյմ' Պրայս, Իտալիայէն՝ Էնրիքօ Ֆէրրի, Քօստա Կայլն : Ինչպէս անունէն կ'երևի, թերթը նըպատակ պիտի ունենայ հայկական խնդրը յուզել «քաղաքակիրթ» կոչուած ազգերու խիղճերուն մէջ և իր փրօփականտայով հարկադրել մեծ պետութիւնները գոհացուցիչ լուծում մը տալու մեր դատին :

Մեծ պակաս մ'ընէ որ կուգայ լիցընելու այդ թերթը : Մեր սրտագին շնորհակարարները հայ դատի այդ արի պաշտպաններուն :

ԿԱՌԱՂԱՆ . — Չորեքշաբթի օր ի Մէնչիլէ, այսօր ալ Մանսուր փաշայի հրապարակը հաւաքուած էր հետաքրքիրներու խումն բազմութիւն մը, ոճրագործի մը կախալանի վրայ անցուցած վերջին վայրկեաններուն ականատես ըլլալու համար :

Ոճրագործը Խպտի մ'էր 25 տարեկանի մօտ, սր առաւօտեան ժամը ճիշտ 7 ին կախալանի վրայ քաւեց իւր սօճիքը :

ՅԻՇԱՏԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Մեր բարեկամներէն լուսանկարիչ Պ. Հ. Ազատեան յառաջիկայ նոր տարւոյ առթիւ խնամքով պատրաստած է ՆՇԱՆԱԿԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅԻՆ ԿԱՐՈՎ ԲԱՐՔ ՓՈՒՐԱՅԻՆԵՐ . Փօսթայի ծախքով շատը 5 սանթիմ, մեծ քանակութեամբ գնողներու 20 Օ/Օ զեղջ կը լինի : Սոյն գործը իր տեսակով առաջին նորութիւնը ըլլալով հայերու մէջ, կարեւոր ցուցագրութիւն մը պիտի յամարուի օտար նամակատանց մէջ : Յանկայողք թող դիմեն առ Պ. Հ. Ազատեան, Աթէնք, Բօսթ Ռէսթորան :

ՄԻՈՒՓԻԻՆ

ԻՆՎՅՈՂԱԿԱՆ ՄՆՏՈՒԿԸ . — Մեր անց- եալ թիւերէն միոյն մէջ ծանուցած էինք որ Եգիպտոսի մէջ խնայողական մտտեղներ պիտի հաստատուին ընդ հսկողութեամբ թղթատարական վարչութեան : Այս անգամ կ'իմանանք որ, Խտիվական հրամանագիր մը որի գործ պիտի դրուի 1901 մարտի ըս- կիցէն՝ կը վաւերացնէ կառավարական այս որոշումը : Մեր ընթերցողք կրնան օգտուիլ այսպիսի օգտաշատ ձեռնարկէ մը :

Թէ Ի՞նչ է ԻՆՎՅՈՂԱԿԱՆ ՄՆՏՈՒԿԸ . — Կառավարութիւնը կ'երաշխաւորէ Խը- նայողական Մտտեղին յանձնուած գրասխն ամբողջութեան և տարին 2 1) 2 0/0 հաշ- տով տոկոսին գրամատիրոջ հատուցումը : Ասկիտ կոտորակները տոկոս չ'պիտի արտադրեն . բաղադրեալ տոկոսը պիտի հաշուուի սկսեալ ամեն տարւոյ Դեկտեմ- բերի 31 էն :

Դրամ յանձնողին պզտիկ տետրակ մը պիտի տրուի ձրիաբար, բայց եթէ կորսուի նորը պիտի արժէ 5 դահեկան :

Առաջին յանձնումը առ նուազն 20 և յաջորդ յանձնումները առ նուազն 5 դա- հեկան պիտի ըլլան :

Միւսնոյն անձը մէկ տարուան մէջ 50 եգիպտական ոսկիէ աւելի չ'պիտի կրնայ յանձնել, ո՛չ ալ 200 ոսկիէ աւելի՝ բաշ- մաթիւ տարիներու միջոցին :

Դրամ յանձնողը կրնայ՝ երբ ուզէ՝ ետ պահանջել իր գրամը : Եթէ յանձնող մը շարունակ 15 տարի ո՛չ ուրիշ գրամ յանձ- նէ, և ո՛չ յանձնածէն մաս մը ետ առնէ, յանձնուած գումարը Խնայողական Մտտե- կին պիտի պատկանի : Տրամագրելի գրա- մով եգիպտական Պարտքի թուղթեր պիտի գնուին : Ի բաց առեալ գատարանական դի- մուսները . արգիլուած է տեղեկութիւն տալ յանձնուած աւանդներուն վրայ :

Թղթատարական Ընդհանուր Տեսուչը՝ ամեն տարի տեղեկագիր մը պիտի ներկա- յացնէ Խնայողական Մտտեղին գործողու- թեանց վրայ :

ԱՆՅԵԱԼՆԵՐԸ ըսած էինք որ հոշակա-ւոր գրամատէր պարոն Բօշիլտ հոս պիտի գայ կառավարութեան հետ բանակցելու համար եգիպտական երկաթուղիներու վա- ճառման և դնման վրայ : Այս անգամ « Ին- քամիտ » թերթը կը հերքէ այդ լուրը, ը- սելով թէ տակաւին որ և է ծրագիր չ'կայ այս մասին կառավարական շրջանակներու մէջ :

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԸ՝ թէ և սերմնավարու- թիւնը ուշ եղաւ՝ առատ հունձք մը կը խոստանայ այս տարի :

ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒ հասոյթները հետզհե- տէ կ'աւելնան : Արդարութեան նախարարու- թիւնը որ 1880 էն մինչև 1888 տարեկան 3000,000 ոսկուոյ հասոյթ մ'ուներ, 661000 ոսկի արտադրեց անցած տարի : Հիմնուելով այս յաւելումի վրայ, Մուգարբաւ թերթը կ'առաջարկէ նուազեցնել գատարանական ծախսերը :

ՀՆԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՆ ԱՌԻԹԻՒՆ ԿԻՐԱԿԻ 7 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1900

8999	2938	1540	976	419	1296
1234	1351	1573	2562	2587	2713
3536	3846	3977	4702	4597	5278
5344	5936	6689	6725	8573	8704
	8946	9051	9081		

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ԾԱՄԱՆԱԿԸ ՊԵՍ Ե

Անդրիերէն լեզուի ծանօթ ուսուցիչ Գառնիկ Էֆ . Սիրունեան գոհացում տա- լու համար շատ մը երիտասարդաց փա- փաքին՝ Էօզպէքիյէ Մօնթէ Բաւլօ Պօտէ- կայի ճիշտ դէմը իւր տան մէջ Անդրիերէն լեզուի դասեր տալ սկսած է :

Նարագոյն մէթոտով կ'ուսուցանէ մի- միայն Վեճ ԱՄՍՈՒՍՆ կարճ ժամանակակի- շոցի մէջ լաւ կարդալ, գրել և խօսիլ սոյն ամենակարևոր լեզուն :

Ամեն օր երեկոյին ժամը 5 էն վերջը կը գտնուի իր տունը, ուր կրնան դիմել նաև անդրիերէն աղերսագիր ևն . գրիւ տալու պէտք ունեցողները :

Փափաքողաց տունըը այցելութեամբ դասախօսելու պատրաստ է :

ԻՂՆԱՏԻՈՍ Կ . ՍԱՐԱՅԵԱՆ

ԴԵՐՁԱԿ ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ Ծարա Պայ - Էլ - Հասիս Թիւ 22

Կը յայտարարէ թէ՛ քանի տարիներէ ի վեր հանրածանօթ Անդրիացի վաճառական - գերձակ ԺՕՆ ԳՕԼԱՔՕԹԻ նման կարևոր տան մը մէջ աշխատելով՝ արհեստին ամեն նբութիւններուն կատարելագոյն հմուտ և փորձառու, այս սին- զամ հաստատուած է հանգուցեալ նուազար Փա- շայի Տայրաին դիմացը, նորաչէն խանութնե- րուն մէջ :

Թէ՛ իրեն դիմող երկու սեռէ Պատ . յա- ճարագրք ըստ ամենայնի զո՛ւ պիտի ձման, աղհեստի նբութիւն տեսնելով, նորաձեու- թեանց զանազանութիւններ գտնելով, և մա- նաւանդ՝ որ ամենէն կարևորն է, չափաւոր վճարումներու փոխան, ձեւաւոր և ճաշակաւոր զգեստներ ունենալով :

Ա Ձ Դ

Եգիպտոսական ազգայնոց կը փութանք ծանուցանել թէ՛ Տիար Կարապետ Նաւա- սարդեան քաղաքէս մեկնած ըլլալով՝ այժմ Եգիպտոսի համար Արևելեան Մամլոյ ներ- կայացուցիչն և Գործակալն եղած է Տիար Օհան Խոնտամեան, որուն պէտք է դիմել սոյն թերթին բաժանորդագրութեան ևն . ի մասին :

Յիշեալն պատրաստ է փափաքողաց հա- մար բերել տալ ամեն ուեսակ գարնոցական, գիտական, պատմական և այլ փիլոսոփան գրքեր ամենայն փութով և չափաւոր գնով :

Քաղաքէս հեռու բնակող անձեր պէտք է իրենց յանձնարարութեան հետ յղեն փոք- ըիկ գումար մը ևս կանխավճար՝ իւր հաս- ցէին յ'Ազգ . վարժարանն ի Տայրա-Էլ-Կի- նէնա :

ՏՆԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՌՐԵԱԼ ԴՐԱՄԱԳՈՒԿ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամե- նէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ օր և է ընկերութենէ մէկ միլեար աւելի է :

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիբէ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՐՇԱԼՈՅՍԻ՞

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻԶԻ ՍԿԻՔԸ Օսեանիյե դեղատանին դիւնացի փողոցին մէջ .

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ, մտքուր և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ, կ'ընդունուին .

Այցեխարտեր, Շրջաբերականներ, Գիրքեր, Հրապարակներ, Մանկագրեր, Տեղեկագիրներ, Կանոնագիրներ, Տոմար և այլ և այլ փոճ- ուականական յանձնարարութիւններ :

Ամենակատարեալ ճշգրտահաշիւներ և չափաւոր գին :

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻԿ ԵՆ .

ՄԻ՛ ՄՆԱՔ ԵՐԲԷՔ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅՈՒ

Բանի որ ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատուն մէջ (ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 Ա՛յն ի նիքէլ, կոթէն լարեղ սիրուն ժամացոյց- ներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է . նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժաւացոյցներ 120 ՂՐԸ է սկսեալ մինչև 2500 ՂՐԸ . Ինչ- պէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէլ, էք . ք- սիտէ ժամացոյցներ . պատի և քօնուլի բպղ- մնական Բանտի շնոր և ամեն ճաշակի յար- մար Գոհարեղէնք :

Ճոխ հաւաքածոյ բուն Ամբրկէտի Ծօ- նօկրաքներու :

Ա . ՊԱԼԵԱՆ Մ Ա Թ Ի Լ Տ

( Դաղթականաց կեանքէն ) ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ ԳԻՄԵԼ ԹԵՐԹԻՄ ԴՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

ՀԱՒԱՔԱԾՈՅ

ՀԱՅՈՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԿԻՐՈՒ

ՏՆՈՐԷՆ Լ . ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ — ԻԱՌԻՉ .

Ականաւոր և հեղինակաւոր երասօիչա- ներու աջակցութեամբ եռաձայն և քսուտ ձայն պատրաստուած սոյն հաւաքածային գնել փափաքողներն կ'սք բաժանորդ սպր- ուլը ուղղորդեն, կրնան դիմել՝ Մոլդոյոյի ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր - Տնօ- րէին .

ՏՆԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԵ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՌՐԵԱԼ ԴՐԱՄԱԳՈՒԿ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամե- նէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ օր և է ընկերութենէ մէկ միլեար աւելի է :

Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիբէ